ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Արթիկի պետական քոլեջի
կառավարման խորհրդի
Նախագահ Հ.Ալեքսանյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՑ

ՔՈԼԵՋԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԱՐԹԻԿ 2022թ

Ընդհանուր դրույթներ

1.Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության « Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսական և ուսանողական համակազմից քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի անդամ առաջադրվելու և ընտրության ընթացակարգ:

2.Կառավարման խորհրդում ընդգրկվելու համար դասախոսական համակազմից խորհրդի անդամների 20 տոկոսի չափով՝2 հոգի,անդամ առաջադրում է մանկավարժական խորհուրդը՝ղեկավարվելով « Մանկավարժական խորհրդի» կանոնակարգով:

3. Կառավարման խորհրդում ընդգրկվելու համար ուսանողական համակազմից խորհրդի անդամների 25 տոկոսի չափով՝3 հոգի,անդամ առաջադրում է ուսանողական խորհուրդը՝ղեկավարվելով «Ուսանողական խորհրդի» կանոնակարգով:

4.Սույն փաստաթղթի համար հիմք է հանդիսանում Արթիկի պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգը:

5.Սույն ընթացակարգում փոփոխությունները և լրացումները հաստատվում են նույն կարգով:

Կառավարման խորհրդում դասախոս- անդամ(ներ)ի առաջադրման ընթացքը

1.Ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ձևավորման կամ արդեն ձևավորված խորհրդում դասախոս-անդամի փոփոխման,առաջադրման համար տնօրենը Մանկավարժական խորհրդին է ներկայացնում սույն խորհրդի ձևավորման համար անհրաժեշտ դասախոս-անդամ(ներ)ի ներկայացման կամ արդեն ձևավորված խորհրդում դասախոս-անդամ(ներ)ի փոփոխման անհրաժեշտությունը:

2.Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը ներկայացնում է Խորհրդի դասախոս-անդամ(ներ)ի թեկնածուներին՝հաշվի առնելով վերջին(ներ)իս հասարակական ակտիվությունը,աշխատանքային պարտականությունների լիարժեք կատարումը և քոլեջի զարգացման մեջ ներդրում ունենալը:

3.Առաջադրված դասախոս-անդամ(ներ)ի թեկնածությունը դրվում է բաց քվեարկության:

4.Խորհրդի որոշմամբ հաստատվում է կառավարման խորհրդում դասախոս-անդամ(ներ)ի թեկնածությունը:

5.Խորհրդի դասախոս-անդամի փոփոխության հարցը քննարկվում է,եթե ըստ կառավարման խորհրդի կանոնակարգի ,դասախոսը հրաժարական է տվել,կորցրել է քոլեջում աշխատանքը,դատապարտվել է ազատազրկման,դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ,առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի

նիստերին,մահացել է: Այս դեպքում առաջադրման և ընտրության ընթացակարգը նույնն է:

6.Նիստը արձանագրվում է և որոշում ներկայացվում լիազոր մարմին:

Կառավարման խորհրդում ուսանող- անդամ(ներ)ի առաջադրման ընթացքը

1.Ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ձևավորման կամ արդեն ձևավորված խորհրդում ուսանող-անդամի փոփոխման,առաջադրման համար տնօրենը ուսանողական խորհրդին է ներկայացնում սույն խորհրդի ձևավորման համար անհրաժեշտ ուսանող-անդամ(ներ)ի ներկայացման կամ արդեն ձևավորված խորհրդում ուսանող-անդամ(ներ)ի փոփոխման անհրաժեշտությունը:

2.Ուսունողական խորհրդի նախագահը ներկայացնում է Խորհրդի ուսանող-անդամ(ներ)ի թեկնածուներին՝հաշվի առնելով վերջիններիս հասարակական ակտիվությունը, առաջադիմությունը:

3.Առաջադրված ուսանող-անդամ(ներ)ի թեկնածությունը դրվում է բաց քվեարկության:

4.Խորհրդի որոշմամբ հաստատվում է կառավարման խորհրդում ուսանող-անդամ(ներ)ի թեկնածությունը:

5.Խորհրդի ուսանող-անդամի փոփոխության հարցը քննարկվում է,եթե ըստ կառավարման խորհրդի կանոնակարգի ,ուսանողը,կորցրել է քոլեջում ուսանողիկարգավիճակը (հեռացվել է,մեկնել է ծառայության կամ ավարտել է),առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին: Այս դեպքում առաջադրման և ընտրության ընթացակարգը նույնն է:

6. Նիստը արձանագրվում է և որոշում ներկայացվում լիազոր մարմին: